DOI: https://doi.org/10.54338/18294200-2024.3-04 *ԴԻԶԱՅՆ*

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մերի Էդգարի Գյոդակյան*, Թամարա Մինասի Թույսուզյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*gyodakyanmery@gmail.com

Դիտարկվում է հայկական ավանդական տարրերի ռացիոնալ օգտագործումը գրաֆիկական դիզայնի համաժողովի շրջանակներում: Ներկայացված են արտերկրում տեղի ունեցած համաժողովների և Հայաստանում իրականացված նմանատիպ միջոցառումների գրաֆիկական վերլուծությունները: Հոդվածի նպատակն է ավանդական մշակույթն ու ժամանակակից քաղաքակրթությունը միմյանց ինտեգրել՝ դարձնելով հայկական ժամանակակից դիզայնը տարբերվող և միջազգային ճանաչմանը հասանելի: Ազգային տարրերի ներառումը գրաֆիկական դիզայնում նպաստում է դրանց բազմազանության ներկայացմանը՝ վերաարժևորելով հայկական ժառանգության յուրահատկությունը:

Բանալի բառեր. *համաժողով, փառատոն, մշակույթ, ազգային արվեստ, զարդանախշեր, գրաֆիկական դիզայն, ավանդական տարրեր*

Ներածություն

Հայկական մշակութային տարրերի օգտագործումը գրաֆիկական դիզայնում մեծ կարևորություն ունի հայ ժողովրդի հարուստ պատմությունը, ավանդույթներն ու արժեքները գնահատելու, ճանաչելու և հասկանալու համար:

Դիզայն համաժողովի (форум) հիմքում ազգային տարրերի ընգրկումը նպաստում է մարդկանց լայն շրջանակին հայկական պատության և մշակույթի ծանոթացմանը:

Հետազոտության միջոցով հայկական ազգային մշակույթը կարող է էլ ավելի ճանաչելի դառնալ ոչ միայն հայկական, այլև միջազգային հանրության կողմից: Պատմական զարգացումն ընդգծելու նպատակով հայկական տարրերի ներկայացումը ժամանակակից դիզայն համաժողովում ոչ միայն այն դարձնում է հանրաճանաչ, այլև պատմում վաղեմի անցյալի մասին:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության խնդիրն է գրաֆիկական դիզայնի նախագծերում էթնիկ և ազգային զարդարվեստային տարրերի ընդգրկման միջոցով ցույց տալ հայկական մշակութային հարստությունը, ավելացնել տարրերի ինքնության զգացումը և տեսողական հաղորդակցությունը: Համաժողովի շրջանակներում ազգային տարրերի կիրառումը կարող է մեծացնել այցելության և մասնակցության ծավալը, ինչպես նաև ոգեշնչման աղբյուր հանդիսանալ այլ խոշոր միջոցառումների համար:

Հետազոտության նպատակը: Դիզայնը, որպես գործիք, օգտագործվելու է մշակութային կամ ազգային ինքնությանն առնչվող պատմություն փոխանցելու համար: Մշակութային տարրերի ներառումը կնպաստի կիրառելիության և ճանաչման ավելացմանը: Տվյալ լուծումը կարող է մեծացնել համաժողովին կամ այլ խոշոր միջոցառումներին մասնակիցների ներգրավվածություն:

Հետազոտության արդիականությունը: Հայկական մշակութային տարրերի ներմուծումն այլ երկրների գրաֆիկական դիզայնի համաժողովներում կնպաստի մշակութային փոխանակմանը և բազմազանությանը համաշխարհային դիզայներական համայնքում: Այն կարող է ոգեշնչման աղբյուր ծառայել օտարերկրյա դիզայներների համար՝ թույլ տալով գլոբալացնել հայկական դիզայնը և ապահովելով աշխարհում դրա շարունակական արդիականությունն ու ազդեցությունը:

Նյութեր և մեթոդներ

Թեմային գրաֆիկական տեսանկյունից ավելի լավ ծանոթանալու համար կատարվել է հայաստանյան և միջազգային փորձի խոշոր միջոցառումների կազմակերպման գրաֆիկական ոճերի ուսումնասիրություն և վերլուծություն: Ստորև կքննարկվեն նմանատիպ միջոցառումների այն օրինակները, որոնք իրենց դիզայներական լուծումներով և մասշտաբայնությամբ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Արդյունքներ և քննարկում

Միջազգային փորձի առանձնահատկությունները

«ՖԱԴ» ֆորում (“FAD” forum)

Նկ. 1. «ՖԱԴ» համաժողովի պաստառները

«ՖԱԴ» (“FAD”) համաժողովը կազմակերպում է կոնֆերանսներ և սեմինարներ [1]: Այն ամենամյա ցիկլ է, որտեղ ներկայացված են տարբեր առարկաների՝ մասնագիտական հանրությանը հետաքրքրող հարցեր: Համաժողովի շրջանակում քննարկվող հարցերը միշտ ընտրվում են, ելնելով երկրի սոցիալական, տնտեսական և բնապահպանական կարևորությունից: 2022 թ.-ի համաժողովի հիմնական թեման արհեստական բանականությունն է, որը կիրառվում է արվեստի, դիզայնի և ճարտարապետության մասնագիտական պրակտիկայում: Աշխարհի մասնագետները, գլխավորելով արհեստական բանականության որոշ առաջատար անուններ այսօրվա ստեղծագործական տեսարանից, կարող են բացահայտել, թե որոնք են դրանից բխող հնարավորությունները, արժանիքներն ու վտանգները: Վերը նշված առանձնահատկությունները փորձել են արտահայտել համաժողովի գրաֆիկական ինքնության մեջ (նկ. 1): Պաստառներում օգտագործվել են լուսանկարներ և գրաֆիկական մասեր: Դիզայնի հիմքում օգտագործված են սև, մոխրագույն, վարդագույն, կանաչ, կապույտ գույները և իրենց համադրությունները: Ապրանքանիշի ինքնությունը ստեղծված է Իսպանական «Բակում Ստուդիո»-ի (“Bakoom Studio”) կողմից:

Թայվանի Դիզայն էքսպո (Taiwan Design Expo)

Թայվանի Դիզայն էքսպոն (Taiwan Design Expo) իր հիմնադրումից ի վեր՝ 2003 թ., դարձել է Թայվանի ամենամյա դիզայներական ցուցահանդեսներից մեկը [2]: Իրականացվող ցուցահանդեսն ամեն տարի նպատակ ունի շեշտել տեղական ապրելակերպը, մշակույթը և եզակի արդյունաբերական առանձնահատկությունները: 2023թ. «Շրջանցում» (“Circle up”) ինքնությամբ (նկ. 2) օգտագործվել է դիզայներական մտածողությունը՝ նոր դարաշրջանը վերաիմաստավորելու համար և ցուցահանդեսների և այլ միջոցառումների միջոցով ներկայացնում է տեղական դիզայնի և արդյունաբերության ներկան ու ապագան: Ցուցահանդեսի ընդհանուր ոճի տարրերը, ինչպես նաև պաստառը (նկ. 3) կատարված են գրաֆիկորեն՝ հիմք ընդունելով տարբերանշանը, որի մասշտաբը մեծացնելով, կարելի է նկատել տարբեր գծային համակարգեր և գունային բաժիններ: Հիմնական գույները սևն ու վարդագույնն են: Ապրանքանիշի ինքնությունը ստեղծված է Թայվանացի Թինգ Ան Հո (Ting-An Ho) հեղինակի կողմից:



Նկ. 2. Թայվանի դիզայն էքսպոյի տարբերանշան



Նկ. 3. Թայվանի դիզայն էքսպոյի պաստառ

Լոնդոնի «Գլոբալ դիզայն ֆորում» (“Global design forum”)

«Գլոբալ» դիզայնի համաժողովը Լոնդոնի դիզայնի փառատոնի մտածողության ղեկավարության համակարգված ծրագիրն է [3], որը տոնում է դիզայնը և դրա ապագան կերտող մտքերը: Ծրագիրը ներկայացնում է թեմաներ, որոնց առնչվում են դիզայներները, ներառյալ թվային դիզայնի նոր հնարավորությունները, ինքնությունը և ներառականությունը, ձևավորում շրջանաձև դիզայնի շարքեր: Տարբերանշանի հիմքում (նկ. 4) ընկած է լատինատառ «Գ» (“G”) տառը և միմյանց ուղղահայաց պատկերված «՝» նշանները: Հիմնական գույներն են սպիտակն ու կարմիրը: Գրաֆիկական տարրերում օգտագործվել են ֆորումի անվան առաջին տառերը՝ «ԳԴՖ» (“GDF”):



Նկ. 4. Լոնդոնի «Գլոբալ դիզայն ֆորումի» տարբերանշան

Հայաստանյան փորձի առանձնահատկությունները,

Երևանի գեղարվեստական տպագրության չորրորդ միջազգային բիենալե (ցուցահանդես, փառատոն կամ ստեղծագործական մրցույթ, որը տեղի է ունենում երկու տարին մեկ)



Նկ. 5. Երևանի գեղարվեստական տպագրության Չորրորդ միջազգային բիենալեի ժյուրիի անդամներ

2023 թ. սեպտեմբերի 8-ից նոյեմբերի 8-ը Երևանի «Ազնավուր» կենտրոնում տեղի ունեցավ Երևանի տպագրության չորրորդ միջազգային բիենալեն, որում ներկայացված էին 55 երկրների 350 արվեստագետների աշխատանքները [4]: Բիենալեին մասնակցում էին միջազգային ժյուրիի անդամներ (նկ. 5): Այս տարվա ծրագրի աչքի ընկնող հիմնական բաղադրիչը հայ արվեստագետների և մասնագետների մեծ խումբն էր: Պաստառները կատարվել են գրաֆիկորեն՝ հարթային պատկերների միջոցով, որոնք իրենց տեսքով հիշեցնում են կամար և կլոր անկյուններով քառանկյուններ: Հիմնական գույներն են՝ կարմիրը, դեղինը, կանաչը, սևն ու մոխրագույնը: Պաստառի վրա ներկայացված է միջոցառման անցկացման ամսաթվերը և հովանավորները: Բիենալեի անվանումը ներկայացված է երկլեզու՝ հայերեն և անգլերեն տարբերակներով:

Նկ. 6. Որոշ հայկական զարդանախշերի պարզեցման ու ոճավորման հաջորդական քայլերը

Նկ. 7. Հայկական զարդանախշերի ոճավորմամբ ստեղծված պաստառներ

Հասկանալու համար հայկական մշակույթի տարրերի կարևորությունը, կատարվել է գրաֆիկական դիզայնի մեջ տարրերի ընդգրկման փորձ: Բացահայտելով հայկական տարրերի յուրահատկությունը [5]՝ հատուկ ոճ ստեղծելու համար վերջիններս ներառվել են դիզայնի մեջ (նկ. 6, 7):

Նկ. 8. Ուխտասարի ժայռապատկերներ, մ.թ.ա. VII - մ.թ.ա. II դդ.

Շատ ժայռապատկերներ ունեն խորհրդանշական նշանակություն, որոնք առաջարկում են պատկերացումներ հին ժողովուրդների հավատալիքների և սովորույթների մասին [6] (նկ. 8): Պաստառներում հորինվածքի և ավանդական պատկերների փոխարկման տարրերի օգտագործումը կարող է ապահովել հարուստ կրթական փորձ, բարձրացնել տեսողական գրավչությունը և խթանել մշակութային գնահատումը: Այս մոտեցումը ոչ միայն օգնում է պահպանել հնագույն արվեստի ձևերը, այլև արժեքավոր դասեր է տալիս գեղարվեստական տեխնիկայի և պատմական ըմբռնման վերաբերյալ [7]: Համադրելով հինը նորի հետ՝ նման պաստառները կարող են ստեղծագործական ոգեշնչում առաջացնել և խորացնել մարդու գնահատանքն արվեստի ու դիզայնի բազմազան աշխարհի հանդեպ [8] (նկ. 9):

Նկ. 9. Հայկական ժայռապատկերների հիմքով վերաձևավորված էլեմենտներով պաստառներ

Մեր ժամանակներում խիստ բարձրացել է ուշադրությունը տառային կուլտուրայի հանդեպ՝ ոչ միայն հրատարակչությունների և տպարանների, այլև ընթերցողների կողմից [9]: Հայկական տառագրությունը հարուստ է իր տեսակներով ու ենթատեսակներով, որոնք պատկերված են միջնադարյան հայ վարպետների, ծաղկողների ու մանրանկարիչների գործերում [9]: Տառերը հաղորդագրություններ փոխանցելու և զգացմունքներ առաջացնելու հզոր գործիքներ են [10]: Այդ իսկ պատճառով ստեղծվել են հայկական տառերի հիմքով անհատական ձևավորված պաստառների օրինակներ (նկ. 9), որոնք կատարվել են գրաֆիկորեն՝ հարթային պատկերների միջոցով: «Օրինաչափությունների վերհանումը, անշուշտ, ընձեռելու է նոր հեռանկարներ հայկական տառատեսակների էլ ավելի հարստացման համար» - Մարտիրոս Սարյան [11]:

Նկ. 10. Հայկական զարդաքանդակների հիմքով վերաձևավորված էլեմենտներով պաստառներ

Հասկանալով ավանդական զարդաքանդակների ծագումն ու մշակութային նշանակությունը, սովորելով տարբեր ավանդական ձևավորումների իմաստներն ու պատմությունները [12], ստեղծվել են հայկական զարդաքանդակների հիմքով վերաձևավորված էլեմենտներով պաստառներ (նկ. 10): Պաստառներում ծավալային և ավանդական զարդաքանդակների համադրումը հզոր միջոց է տեսողական ազդեցությունը բարձրացնելու, մշակութային ժառանգությունը և կրթական հնարավորությունները խթանելու համար: Պաստառների հիմնական գույնն ապահովում է մաքուր և չեզոք հարթություն, որը թույլ է տալիս հստակորեն առանձնանալ մյուս տարրերին: Օգտագործված հիմնական գույներն են՝ կարմիրը, կանաչը ծավալային զարդաքանդակների համար և սևի համադրությունը: Պաստառի կենտրոնական կետը մեծ, եռաչափ ծավալային զարդաքանդակների համադրություն է, որը ներկայացնում է կապը դրանց միջև:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքում ստեղծվեցին այնպիսի նմուշներ, որոնք ոչ միայն գեղագիտորեն գրավիչ են, այլև դրականորեն նպաստում են Հայաստանի մշակութային ինքնության արժևորմանը և պահպանմանը: Յուրաքանչյուր ազգային տարր համապատասխան գրաֆիկ դիզայնի բաժնում յուրովի է արտացոլվել, որի արդյունքում հոդվածը հնարավորություն է տալիս երիտասարդ մասնագետներին, սկսնակներին, ազգային արժեքներով հետաքրքրված մարդկանց և օտարերկրյա դիզայներներին գլոբալացնել հայկական դիզայնը աշխարհում՝ ապահովելով դրա շարունակական արդիականությունն ու ազդեցությունը: Այն նպաստում է միջմշակութային փոխըմբռնմանը և գնահատմանը:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված աշխատանքների վերլուծության հիման վրա կարելի է զարգացնել գրաֆիկական դիզայնի մեջ հայկական մշակութային տարրերի ներդրումը, որը հնարավորություն կտա վերաարժևորելու հայկական ժառանգության յուրահատկությունը: Այս մոտեցումը ոչ միայն կաշխուժացնի ավանդական արվեստի ձևերը, այլև կներկայացնի դրանք գնահատելու և ուսումնասիրելու նորարարական ուղիներ:

Գրականության ցանկ

[1] «ՖԱԴ» (“FAD”) ֆորումի կայք էջ, Available from: <https://visualjournal.it/fadforum22> (accessed 20.12.2023):

[2] Թայվանի Դիզայն Էքսպոյի (Taiwan Design Expo) կայք էջ, Available from: <https://www.designexpo.org.tw/en> (accessed 20.12.2023):

[3] Լոնդոնի Գլոբալ դիզայն փառատոնի մասին տեղեկությունների կայք, Available from: <https://www.londondesignfestival.com/> (accessed 21.11.2023):

[4] Երևանի գեղարվեստական տպագրության Չորրորդ միջազգային բիենալեյի կայք էջ, Available from: <https://yerevanprintbiennale.com/> (accessed 25.12.2023):

[5] **Ա.Քյուրքչյան, Հ.Բ.Խաչերեան,** Հայկական զարդարվեստ. Քրաֆթոլոջի ՍՊԸ, Երևան, 2010, 192 էջ:

[6] **Ս.Սարդարյան,** Հայաստանի ժայռապատկերները քարի դարից մինչև բրոնզի դար. ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 244 էջ:

[7] **J.G.Ghazarian,** The Mediterranean Legacy in Early Celtic Christianity. Newton Printing, London, England, 2006, 264 p.

[8] **Ա.Հ.Գրիգորյան,** Հայ քրիստոնեական ճարտարապետությունը և նախաքրիստոնեական մշակույթի ներգործությունը. «Զանգակ-97» ՍՊԸ, Երևան, 2023, 440 էջ:

[9] **Հ.Մնացականյան,** Հայկական տառատեսակներ. «Հայաստան» հրատ., Երևան, 1979, 160 էջ:

[10] **Ֆ.Աֆրիկյան,** Տառարվեստ. «Սովետական գրող» հրատ., Երևան, 1984, 140 էջ:

[11] **Հ.Ն.Գործակայան,** Հայկական տառատեսակներ. «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան, 1973, 108 էջ:

[12] Study on the Application of Traditional Graphic in the Modern Graphic Design, DOI:10.2991/ecss-19.2019.80, Available from: <https://www.researchgate.net> (accessed 07.04.2024).

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ЭЛЕМЕНТОВ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ В КОНТЕКСТЕ ФОРУМА ГРАФИЧЕСКОГО ДИЗАЙНА

Мери Эдгаровна Гёдакян*, Тамара Минасовна Туйсузян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*gyodakyanmery@gmail.com

Рассматривается рациональное использование армянских традиционных элементов на форуме графического дизайна. Представлены проведённые форумы за рубежом и аналогичные мероприятия в Армении. Цель статьи – объединить традиционную культуру и современную цивилизацию, сделав сегодняшний армянский дизайн самобытным и признанным на международном уровне. Изучение и использование элементов армянской культуры на форуме графического дизайна служат разным целям: интегрировать традиционную культуру и современную цивилизацию, сделать современный армянский дизайн самобытным и доступным для международного признания. Включение национальных элементов в графический дизайн способствует представлению их разнообразия, показывая уникальность армянского наследия.

Ключевые слова: *форум, фестиваль, культура, национальное искусство, орнаменты, графический дизайн, традиционные элементы*

USAGE FEATURES OF ELEMENTS OF ARMENIAN CULTURE IN A GRAPHIC DESIGN FORUM CONTEXT

Meri Gyodakyan*, Tamara Tuysuzyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*gyodakyanmery@gmail.com

The article considers on the rational use of traditional Armenian elements in graphic design forum. There are presented similar events implemented in Armenia and the forums held abroad. The aim of the article is to integrate traditional culture and modern civilization, making contemporary Armenian design distinctive and internationally recognized. The study and inclusion of the Armenian cultural element in the forum serves for different purposes: including educational and cultural programs, participating in other aspects of Armenian history, art and culture, as well as various trends in graphic design. The inclusion of the national element in the graphic design contributes to the presentation of their diversity, showing the uniqueness of the Armenian heritage.

Keywords: *forum, festival, culture, national art, ornaments, graphic design, traditional elements*

Գյոդակյան Մերի Էդգարի *(ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայնի ամբիոն, մագիստրոս, (+374)94405909, gyodakyanmery@gmail.com,* ***Թույսուզյան Թամարա Մինասի, դոցենտ*** *(ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայնի ամբիոն, (+374)99568448, tamara.tuysuzyan@gmail.com*

Гёдакян Мери Эдгаровна *(РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дизайна, магистрант (+374)94405909, gyodakyanmery@gmail.com,* ***Туйсузян Тамара Минасовна, доцент*** *(РА, г. Ереван)- НУАСА, кафедра Дизайна, (+374)99568448, tamara.tuysuzyan@gmail.com*

Gyodakyan Meri *(RA, Yerevan)- NUACA, department of Design, Master, (+374)94405909, gyodakyanmery@gmail.com,* ***Tuysuzyan Tamara, associate prof.*** *(RA, Yerevan)- NUACA, department of Design, (+374)99568448, tamara.tuysuzyan@gmail.com*

Ներկայացվել է՝ 02.12.2024թ.

Գրախոսվել է՝ 12.12.2024թ.

Ընդունվել է տպագրության՝ 25.12.2024թ.